Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր _____ Ն.Խ. Սարիբեկյան
«___11___» ___11___ 2021 թ.

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

№	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	Էջ
1.	Նախաբան	3
2.	Վարչական կազմ	4
3.	Ամբիոնի վարիչներ	4
4.	Ընդունելություն 2020	5
5.	Գիտական խորհրդի գործունեությունը	6
6.	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի գործունեությունը	6
7.	Գիտական մաս	7
8.	Ֆակուլտետների գործունեություն	8
9.	Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին	9
10.	Ուսումնական մաս	11
11.	Արտաքին կապերի բաժին	13
12.	Գիտաբժշկական ուումնական կենտրոն	18
13.	Գրադարան	19
14.	Համացանցային տիրույթում կատարված աշխատանքներ	21
15.	Տնտեսական մաս	23
16.	Ուսանողական խորհուրդ	24
17.	Որակի ապահովման և կրթության բարեփոխումներ	25
18.	SWOT (ՈՒԹՀՎ) վերլուծություն	26

1. ՆԱԽԱԲԱՆ

Ավանդական բժշկության համալսարանի ղեկավարությունը հաշվետու ժամանակաշրջանում առաջնորդվել է համալսարանի կանոնադրությամբ և գործող նոր ռազմավարական ծրագրով:

Համալսարանը, հավատարիմ իր առաքելությանը, իրականացնում է հաջորդական ու համակարգված քայլեր՝ զարգացնելով մատուցվող ծառայությունները բժշկական կրթության ուղղությամբ, բարելավելով դասավանդման մեթոդները և տեխնոլոգիաները: Անընդհատ զարգացման, առաջընթացի և ժամանակին համահունչ գործունեությունն ԱԲՀ-ն իրականացնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական հանձնաժողովի կողմից ներկայացված դիտարկումների ու առաջարկությունների հիման վրա:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի արդյունավետ գործունեության համար պարբերաբար արդիականացվում են տեխնիկական միջոցները, լսարանները, լաբորատոր կաբինետները: Դասախոսների մասնագիտական և մանկավարժական որակների անընդհատ կատարելագործումը խթանում է համալսարանի մրցակցությունը:

Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել է համալսարանի երկու մասնաշենքերի կառուցման աշխատանքները: Ավարտից հետո կունենանք փոքրիկ համալսարանական ավան, որտեղ կլինեն միջոցառումների գիտական կոնֆերանսների սրահ, ուսանողների համար նախատեսված հանրակացարան՝ իր բոլոր հարմարություններով, ճաշարան, մարզասրահ, կահավորված, ժամանակակից սարքավորումներով հագեցված մեծ և լուսավոր լսարաններ, լաբորատորիաներ և, հատկապես, ատամնաբուժական կլինիկա:

Հաշվետու ժամանակահատվածում Յուքոմ ընկերության հետ վերակնքված ծառայությունների մատուցման պայմանագրի արդյունքում համալսարանում գործում է գերարագ ինտերնետային կապ: Ուսանող-դասախոս կապն ապահովող տարբեր էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով, որը շարունակաբար կատարելագործվում է, ապահովվում է կրթական նյութերի հասանելիությունը:

Համալսարանը մեծապես ընդլայնել է միջազգային համագործակցության աշխարհագրությունը. գործակցային հուշագրերի, պայմանագրերի կնքումը շարունակական բնույթ է կրում:

2020-2021 ուստարվա ԱԲՀ-ի հաշվետվությունը կազմվել է ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների հիման վրա, որտեղ ամփոփվում են տվյալ ուստարում ուսումնական, գիտահետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները: Այն ներկայացվում է Գիտխորհրդին և տեղադրվում բուհի պաշտոնական կայքում:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

№	Անուն, Ազգանուն	Պաշտոն
1.	Սարիբեկյան Նորիկ	Ռեկտոր /կ.գ.թ.
2.	Գյոզալյան Արայիկ	ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտոր
3.	Մինասյան Արսեն	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր
4.	Թարջումանյան Նվարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ
5.	Կարապետյան Անահիտ	Դեկան
6.	Հովսեփյան Ռոման	Գիտական մասի վարիչ/բ.գ.թ.
7.	Սարգսյան Ասյա	Ուսումնական մասի վարիչ
8.	Հովսեփյան Մանուշակ	ՈԱ բաժնի առաջատար մասնագետ
9.	Սարգսյան Անի	Արտաքին կապերի բաժնի վարիչ
10.	Ավոյան Սուսաննա	Գլխ. հաշվապահ
11.	Խեչումյան Սիմոն	Քաղ. պաշտպ. շտաբի պետ
12.	Մանաշյան Գոհար	Դեկանի օգնական
13.	Կիրակոսյան Գոհար	Ուսումնական մասի վարիչի օգնական
14.	Դանիելյան Նաիրա	Ուսումնական մասի վարիչի օգնական
15.	Գաբրիելյան Վարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ
16.	Հարությունյան Լուսինե	Գանձապահ-հաշվապահ
17.	Ավետյան Աննա	Գրադարանավարուհի

3. ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐ

Ամբիոն	Ազգանուն, անուն	Գիտական աստիճան, կոչում
Հումանիտար առարկաների	Կարապետյան Տաթևիկ	բանաս. գ.թ.
Բնագիտական առարկաների	Ջավրուշյան Հայարփի	կ.գ.թ.
Բժշկակենսաբանական առարկաների	Հունանյան Նաիրա	կ.գ.թ.
Սոցիալական բժշկության	Սարգսյան Աննա	բ.գ.թ.
Թերապևտիկ առարկաների /ժ/պ /	Արշամյան Արա	բ.գ.թ.
Վիրաբուժական առարկաների	Մանվելյան Ռաֆայել	բ.գ.դ., պրոֆեսոր
Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության	Մինասյան Էլեոնորա	բ.գ.թ.
Ստոմատոլոգիայի	Հակոբյան Հովնան	բ.գ.թ.

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 2020

Համալսարանում իրականացվում է միայն առկա ուսուցում: 2020 թվականի ընդունելությունը անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով իրականացվել է համաձայն լիցենզիայի սահմանված տեղերի թվաքանակի, մասնավորապես.

- «Բուժական գործ» մասնագիտություն՝ 67 ուսանող
- «Ստոմատոլոգիա» մասնագիտություն՝ 17 ուսանող:

Ըստ տարիների համեմատական պատկերը.



Հաշվետու տարում «Բուժական գործ» մասնագիտության դիմորդների թիվը նվազել է՝ նախորդ տարիների ընդունելության տվյալների համեմատ, որն անմիջականորեն կապված է ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում համավարակի տարածման հետ:

«Ստոմատոլոգիա» մասնագիտության դիմորդների թիվը, ի տարբերություն նախորդ տարիների, զգալիորեն աճել է:

Ավանդական բժշկության համալսարանի երկու՝ «Ստոմատոլոգիական» և «Բուժական» ֆակուլտետներն իրականացնում են անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրեր.

Մասնագիտությունը և դասիչը	Ուսուցման ձևը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Որակավորում	Սահմանային տեղեր
Բուժական 091101.00.7	Առկա	6	Հայերեն և անգլերեն	բժիշկ	120
Ստոմատոլոգիական 091201.00.7	Առկա	5	Հայերեն և անգլերեն	բժիշկ-ստոմատոլոգ	120

Ընդհանուր առմամբ, 2020-2021 ուստարում ԱԲՀ-ում սովորող ուսանողների թիվը տարեսկզբին (ներառյալ 1-ին կուրսերը) կազմել է 366 ուսանող, այդ թվում՝ 303 ուսանող «Բուժական գործ» ֆակուլտետում, 63-ը՝ «Ստոմատոլոգիական»:

5. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի գիտական խորհուրդը համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական, գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող կոլեգիալ մարմին է, որը նախագահում է ԱԲՀ ռեկտոր կ.գ.թ. Ն.Խ.Սարիբեկյանը:

2020-2021 ուստարվա ընթացքում ԱԲՀ-ի գիտական խորհուրդը գումարել է 13 նիստ:

Հաշվի առնելով աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) վարակի տարածման դեպքերը, 2020-2021 ուստարվա ընթացքում հրավիրված 12 նիստերի ընթացքում քննարկվել են նաև արտակարգ դրության պայմաններում ուսումնական գործընթացի անխափան աշխատանքների կազմակերպման և իրականացման, մասնավորապես՝ ուսումնական գործընթացը հեռավար (առցանց) ձևաչափով արդյունավետ անցկացնելու վերաբերյալ հարցեր:

Ընդհանուր առմամբ, ԱԲՀ-ի գիտական խորհրդի կողմից հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և հաստատվել են.

- գիտխորհրդի և ստորաբաժանումների 2020-2025 թթ. հնգամյա աշխատանքային պլանները,
- կառավարման, գիտական խորհրդի, ռեկտորատի, ինչպես նաև հանձնաժողովների կազմերը,
- 2020-2021 ուստարվա ամբողջովին նոր ՄԿԾ-ը (առարկայական ծրագրերը և ուսումնական պլանները,
- համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից ներկայացված թերությունների վերացման պլան-ժամանակացույցով իրականացված աշխատանքների վերաբերյալ հարցեր,
- կազմակերպչական, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման վերաբերյալ անհրաժեշտ իրավանորմատիվային փաստաթղթերի փաթեթները,
- համալսարանի 2020-2021 ուսումնական տարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի մասնագիտությունների ընդունելության քննությունների արդյունքները:
- Լսվել են ամփոփիչ ատեստավորման արդյունքները (ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություն):
- Լսվել են ամբիոնների վարիչների, ստորաբաժանումների և հանձնաժողովների ղեկավարների հաշվետվությունները (թվով 16):

Գիտական խորհրդի նիստերում քննարկված հարցերի շուրջ կայացվել են համապատասխան որոշումներ:

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում Ավանդական բժշկության համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի գործունեությունը հիմնականում իրականացվել է գործող ՄԿԾ-ի վերանայման ուղղությամբ, որի համար հիմք են հանդիսացել.

- ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները,
- ԱԲՀ-ի «Բուժական գործ» անընդհատ և ինտեգրացված ՄԿԾ-ի՝ Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական համալսարան»-ի կողմից ներկայացված արտաքին փորձաքննության եզրակացությունները,
- ԱԲՀ-ի «Ստոմատոլոգիա» անընդհատ և ինտեգրացված ՄԿԾ-ի՝ Բելառուսի Հանրապետության «Վիտեբսկի պետական բժշկական համալսարանի» կողմից ներկայացված արտաքին փորձաքննության եզրակացությունները,
- Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական համալսարան»-ի, «Վիտեբսկի պետական բժշկական համալսարանի» հետ իրականացրած ՄԿԾ-ների բենչմարքինգի արդյունքները,
- արտաքին և ներքին շահակիցների առաջարկությունները:

Ունենալով անհրաժեշտ հիմնավորումներ՝ 03.02.2020թ. ձևավորվել էր 091201.00.7- «Բուժական գործ» և 091101.00.7- «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների անընդհատ և ինտեգրացված մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման նոր աշխատանքային խումբ, որը 2020թ. փետրվարի 10-ից մինչև օգոստոսի 20-ը իրականացրել է մշտադիտարկման և վերանայման աշխատանքներ:

Վերանայման արդյունքում մշակվել են «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների մասնագիտական նոր կրթական ծրագրեր (վերջնարդյունքներ, ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր): Նշված աշխատանքների թվում վերանայվել և վերամշակվել են «Բուժական գործ» ՄԿԾ-ի և «Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ի ուսումնաարտադրական պրակտիկայի ծրագրերի ձևաչափերի նախագծերը, որտեղ կատարվել են որոշակի բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ: Ավելացել է ուսումնաարտադրական պրակտիկաների ժամաքանակը: Վերանայվել է նաև «ԱԲՀ-ի ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման» կանոնակարգը, կազմվել է «Պրակտիկայի թղթապանակ»:

7. ԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

Համալսարանում հաշվետու ուստարում դասախոսել են 56 մասնագետներ, որոնցից 3–ն ունեն դոկտորի գիտական աստիճան, իսկ 24-ը՝ գիտությունների թեկնածուի:

Համալսարանի դասախոսների մի մասն ուսումնական գործընթացին զուգահեռ զբաղվում է նաև գիտական գործունեությամբ: Համալսարանում դասախոսող գիտնականների կողմից հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ, խմբագրվել է արտերկրում լույս տեսած մեկ գիրք և հրատարակվել է 36 հոդված, որոնցից 25-ը՝ արտերկրում:

Մեր դասախոսներն իրենց գիտական ձեռքբերումների մասին զեկուցել են մի քանի օնլայն միջազգային գիտաժողովներում: Համալսարանի դասախոսներից 4-ը մասնագիտական վերապատրաստում(ներ) են անցել:

Գծապատկեր № 1

ԱԲՀՀ-ի դասախոսների գիտական գործունեության ամփոփ պատկերը 2020-2021 թթ.



Նախորդ տարվա տվյալների համեմատությամբ՝ հաշվետու տարում դասախոսական կազմի կողմից գիտահետազոտական հոդվածների, թեզերի և աշխատությունների հրատարակումների թիվը որոշակի նվազել է:

8. ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների գործունեությունն իրականացվել է համաձայն հաստատված և գործող հնգամյա աշխատանքային պլանի:

Համալսարանում սովորում են հիմնականում օտարազգի ուսանողներ, և դասավանդումն ամբողջովին իրականացվում է անգլերեն լեզվով:

2020-2021 ուստարում դեկանի աշխատանքները կազմակերպվել են աշխատանքային պլանին համահունչ.

1. Ի տարբերություն 2019-2020 ուսումնական տարվա, հաշվետու տարում համալսարանում օտարերկրյա սովորողների թվաքանակը առաջին կուրսերում նվազել է, իսկ բարձր կուրսերում որոշակի ավելացել է, ինչպես նաև ընդլայնվել է համալսարանի ուսանողների աշխարհագրական շրջանակը:
2. Ցավալիորեն պետք է արձանագրենք, որ 2020-2021 ուստարում ևս կենտրոնացված միասնական ընդունելությամբ հայ ուսանողների ընդունելություն չի եղել:
3. Համաձայն գործող աշխատանքային պլանի՝ դեկանատների աշխատանքները հիմնականում ըստ հաշվետու ժամանակահատվածի գործողությունների համար իրականացվել են ժամանակին:
4. Ըստ գործողությունների կազմվել են համապատասխան արձանագրություններ (գիտական խորհրդ, ռեկտորատ, ֆակուլտետային խորհրդակցություններ):
5. 2020-2021 ուստարում համալսարանն ունեցել է՝ 18 շրջանավարտ:
4. Հաշվետու տարում գիտխորհրդին են ներկայացվել ձմեռային և ամառային քննաշրջանների հետ կապված առաջադիմության և լուծարքների արդյունքները:
5. Երկու ֆակուլտետների 2019-2020 ուստարվա ուսումնական պլանով նախատեսված ամառային ուսումնաարտադրական պրակտիկան, ելնելով արտակարգ դրությունից

(պայմանավորված նոր կորոնավիրուսով՝ COVID-19), ռեկտորատով որոշվել էր անցկացնել հաշվետու տարվա ընթացքում, որն կազմակերպվեց՝ հերթապահությունների ձևով:

6. Համալսարանի դասախոսների համար կազմակերպվել են խորհրդակցություններ՝ կապված հեռավար ուսուցման հետ:
7. Մասնակցություն է ցուցաբերվել համալսարանի Կառավարման խորհրդի, Գիտ-խորհրդի, Ռեկտորատի նիստերին և այլ հանձնաժողովների աշխատանքներին, համալսարանում կազմակերպված այլ միջոցառումներին:
8. Կատարվել են դասալսումներ համալսարանի ամբիոնների որոշ դասախոսների մոտ:
9. Համագործակցություն է եղել համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ:

9. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Համալսարանի ղեկավարությունը, համաձայն իր առաքելությանը, սկզբունքներին և ռազմավարական զարգացման ծրագրի նպատակներին, իրականացնում է անձնակազմի նպատակային կառավարման քաղաքականություն (գծապատկեր 1, 2):

Գծապատկեր № 1

Պրոֆեսորադասախոսական կազմի համեմատական տվյալներ



Հաշվետու ժամանակահատվածում պրոֆեսորադասախոսական կազմի նվազումը հիմնականում պայմանավորված է COVID-19 համավարակով, որի պատճառով փակ կլինիկաներից ուսումնական գործընթացները, դասախոսների դասերը հիմնականում տեղափոխվել են 2021-2022 ուստարի:

Համալսարանում ընդհանուր պրոֆեսորադասախոսական կազմից (56) 25-ը կին դասախոսներ են: Ի տարբերություն նախորդ տարվա, հաշվետու տարում դասախոսական կազմը համալրվել է 7-ով, իսկ ընդհանուր գիտական ներուժի համալրումը հետևյալն է՝ 2 պրոֆեսոր, 1 դոցենտ և 11 գիտությունների թեկնածու: Այսինքն, համալսարանի ղեկավարության կողմից իրականացվող դասախոսական անձնակազմի կառավարման քաղաքականությունը ակնհայտ կարելի է գնահատել դրական:

Գծապատկեր № 2

Համալսարանի վարչական անձնակազմը



Հաշվետու տարում վարչական անձնակազմում էական փոփոխություններ չեն կատարվել: Ուսումնաօժանդակ կազմի փոփոխությունը պայմանավորված է հիմնականում նոր պաշտոնների տեղակալմամբ՝ ԱԲՀ-ի նոր կառուցվածքին և պաշտոնի անձնագրին համապատասխան: Համալսարանի վարչական անձնակազմի 17-ից 13-ը կին են:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի կողմից 2020-2021 ուստարվա ընթացքում կնքել է 71 աշխատանքային պայմանագիր: Բոլոր աշխատողները աշխատանքի են ընդունվել պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 20-ը (պայմանագրի լուծարմամբ), որից 5-ը հիմնական աշխատող են, իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 57-ը:

2020-2021 ուստարվա համար 50 դասախոս ընդգրկվել են պահուստային դասախոսների էլեկտրոնային բազայում: Նախորդ՝ 2019-2020 ուստարվա դասախոսների պահուստային ցուցակից 2020-2021 ուստարվա պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկվել են Ռաֆայել Մանվելյանը՝ որպես «Վիրաբուժական առարկաների» ամբիոնի վարիչ, դասախոս և Գայանե Ղամբարյանը՝ որպես «Ստոմատոլոգիայի» ամբիոնի դասախոս:

Համալսարանում աշխատում են տարիքային 8 թոշակառուներ:

- Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններում: Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:
- Նոր ուսումնական տարվա սկզբին ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:
- Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 271 տեղեկանք (աշխատողներին՝ 17, ուսանողներին՝ 254), բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:
- 2020-2021 ուստարվա մայիսի 27-ից հունիսի 14-ը ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի կողմից ԱԲՀ պրոֆեսորադասախոսական կազմի համար անցկացվել է մեկամսյա վերապատրաստում «Բարձրագույն կրթության ժամանակակից հիմնախնդիրներ և որակի

ապահովման համատեքստը» թեմայով, որը վարել են Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, հ.գ. դոկտոր, պրոֆեսոր Կ. Վարդանյանը և ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր մ.գ. թ., դոցենտ Ա. Գյոզալյանը:

Վերապատրաստման ավարտին 70 մասնակցի տրվել են հավաստագրեր:

10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ

2020-2021 ուստարում համալսարանի ուսումնական մասն իրականացրել է ԱԲՀ-ում գործող կրթական ծրագրերին ու պլաններին համապատասխան գործընթացներ՝ առկա և հեռավար ձևով:

- Ուսումնական գործընթացը լիարժեք իրականացնելու համար ժամանակին պատրաստվել են ուսանողների ցուցակները, ուսումնական մատյանները, դասաբաշխման, ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալը, օրացույցային-թեմատիկ պլանների, խորհրդատվությունների մատյանի և այլ ձևաթղթերը:
- 2020-2021 ուստարում կազմվել և ժամանակին պատրաստ են եղել երկու ֆակուլտետների ուսումնական տարվա դասացուցակները, միջանկյալ ստուգումների, քննությունների, լուծարքների և աշնանային կիսամյակի պրակտիկայի ժամանակացույցերը:
- 2020-2021 ուստարում վարձակալվել են նոր կլինիկաներ՝ «ԱրթՄեդ» ԲԿ և «Հանրապետական» ԲԿ:
- Բոլոր վարձակալած կլինիկական բազաները պատրաստ են եղել ընդունելու ուսանողներին:
- Հաշվետու տարվա ընթացքում ԱԲՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգումն ու գնահատումը կազմակերպվել է վերանայված և գործող նոր կարգի համաձայն:
- Կիսամյակների սկզբում ճշտվել են բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների բոլոր կուրսերի ուսանողների ցուցակները, կազմվել են ուսումնական խմբերը, ըստ որի ունեցել ենք օտարազգիների 22 խումբ:
- Ցածր առաջադիմության և վատ հաճախումների պատճառով համալսարանի բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներից հեռացվել են 35 (26 բուժ., 9 ստոմ.) ուսանող, ուսանողական իրավունքներից իրենց դիմումի համաձայն ազատվել են 11 (6 բուժ., 5 ստոմ.) ուսանող:
- 2020-2021 ուսումնական տարում Հորդանանի քաղաքացի հանդիսացող 1 ուսանող տեղափոխվել է Ավանդական բժշկության համալսարանի բուժական ֆակուլտետի 5-րդ կուրսում ուսումը շարունակելու:

Աշխարհում և ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման հետևանքով և ՀՀ կառավարության 16.03.2020թ-ի N 298-Ն որոշմամբ հայտարարված արտակարգ դրության պայմաններում համալսարանն ապահովվել է ուսանողների կրթության շարունակականությունը՝ հեռավար ուսուցմամբ:

Ամեն ամսվա ավարտին դասախոսները ներկայացրել են կատարողականներ դասերը վարելու մասին, ուսումնական մասին տրամադրել են նաև վարած դասերի տեսանյութերը, սկրինշոթերը:

- Կազմակերպվել են շրջանավարտների դիպլոմների և նրանց հավելվածների տպագրման աշխատանքները և շրջանավարտների դիպլոմների բաշխման մատյանի վարումը: Հաշվետու տարում բուհն ավարտել են՝
- ✓ ‹‹Ստոմատոլոգիա›› մասնագիտության անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով՝ 11 շրջանավարտ:
- ✓ «Բուժական գործ» մասնագիտության անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով՝ 7 շրջանավարտ:

Սահմանված ժամկետներում դիպլոմները և նրանց հավելվածները հանձնվել են շրջանավարտներին:

Տարվա կտրվածքով ամբիոնների ընդհանուր առաջադիմությունը կազմել է 91 %, որը 1.4 %-ով բարձրացել է 2019-2020 ուստարվա (ընդհ. 89,6 %, որակ. 64,4 %) համեմատ, իսկ որակական առաջադիմությունը կազմել է 65 %, որն աճել է 0.6 %-ով: Ընդհանուր և որակական առաջադիմության բարձր տոկոս գրանցվել է «Վիրաբուժական առարկաների» ամբիոնում՝ 99,8% և 82,3%: Համեմատաբար ցածր ընդհանուր առաջադիմություն գրանցվել է «Բնագիտական առարկաների» ամբիոնում՝ 80,6%, իսկ ցածր որակական առաջադիմություն՝ «Թերապևտիկ առարկաների» ամբիոնում՝ 50,8%:

Կարգավորվել և վերահսկվել են համալսարանի ամբիոնների ուսումնական պարապմունքներն ու գործունեությունը:

- 2020-2021 ուստարում (ընդհանուրը՝ 90 %, որակականը՝ 64,7%) 2019-2020 ուստարվա համեմատությամբ (ընդհանուրը՝ 87,6%, որակականը՝ 65,3 %) բուժական ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը քիչ բարձրացել է, իսկ որակականը մնացել է նույն տիրույթում (65,0%):

2020-2021 ուստարում (ընդհանուր՝ 92 %, որակականը՝ 65,4%) 2019-2020 ուստարվա համեմատությամբ (ընդհանուր՝ 91,7%, որակականը՝ 64,0%) ստոմատոլոգիական ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը նույնն է մնացել, իսկ որակականը (65,0%) քիչ բարձրացել է:

2020-2021 ուստարում 2019-2020 ուստարվա համեմատությամբ բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների ընդհանուր և որակական առաջադիմությունները մնացել են նույն տիրույթում (91 %, 65 %):

- 2021 թվականի հուլիսի 17-ին «Անի Գրանդ» հյուրանոցի կոնֆերանս դահլիճում Ավանդական բժշկության համալսարանի 2020-2021 ուստարվա «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների 18 շրջանավարտների հանդիսավոր արարողությամբ տրվել են ավարտական դիպլոմներ:

11. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

Ավանդական բժշկության համալսարանի Արտաքին կապերի բաժինը համալսարանի միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածք է, որը գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան, ԱԲՀ-ի և Արտաքին կապերի բաժնի կանոնակարգի հիման վրա:

Արտաքին կապերի բաժնի աշխատանքներն իրականացնում են բաժնի վարիչը և բաժնի առաջատար մասնագետը՝ ռեկտորի և համալսարանի ստորաբաժանումների հետ համատեղ:

Արտաքին կապերի բաժնի հիմնական նպատակն է ապահովել համագործակցությունը ներպետական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների միջև, ընդլայնել միջազգային համագործակցությունը, նպաստել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերին, համալսարանի և միջազգային այլ կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, այլ երկրներից ուսանողների ներգրավմանն ու երկրների աշխարհագրության մեծացմանը:

1. ԱԲՀ ուսանողների ընդունելություն և հրամանագրում

1.1. Մայիս-հունիս ամիսներին բաժնի կողմից կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության փաստաթղթերի և չափորոշիչների նախապատրաստում:

1.2. ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից սահմանված ժամկետներում (13.07.2019-25.09.2019) կատարվել է դիմորդների անձնական դիմումների ու գործերի ուսումնասիրում և ներկայացում ՀՀ ԿԳՄՍՆ՝ փորձաքննության: Ըստ ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից ներկայացված 19.10.2020 N27/15.2/27641-2020 գրության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից ընդունված 2020 թվականի հոկտեմբերի 10-ի N1447-Ա/2 հրամանի՝ հաշվի առնելով նոր տիպի կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված համաճարակային իրավիճակը, վճարովի առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության համար օտարերկրացիների և սփյուռքահայերի փաստաթղթերի ընդունման ժամկետը երկարաձգվեց և վերջնաժամկետ սահմանվեց 2020 թվականի հոկտեմբերի 30-ը, որի ընթացքում համալսարանի կողմից ևս մի քանի դիմորդների փաստաթղթեր են ներկայացվել ԿԳՄՍՆ:

1.3. Ուսումնական մասի վարիչի և դեկանի հետ համատեղ կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության հանձնաժողովի կազմի ընտրություն և հրամանագրում:

1.4. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ համապատասխան հրահանգների հիման վրա ուսանողների հրամանագրում:

1.5. Հոկտեմբեր ամսվա վերջին կատարվել է համալսարանի օտարերկրյա ուսանողների ընդունելության արդյունքների հաստատում՝ ուսումնական մասի վարիչի և դեկանի հետ համատեղ:

1.6. Արտաքին կապերի բաժնի հիմնական գործառույթներից է նաև օտարերկրյա ուսանողների ժամանակավոր կացության քարտերի կազմակերպման գործընթացը, որի համար բաժինը համագործակցում է ՀՀ անձնագրային և վիզաների վարչության Կենտրոնական անձնագրային բաժանմունքի հետ: Կացության քարտերի հետ կապված աշխատանքը կատարվել է 2020թ. սեպտեմբեր–նոյեմբեր և 2021թ. փետրվար-մարտ

ամիսներին՝ ուսանողներին բուհ հրամանագրելուց և ՀՀ ԿԳՄՍՆ հաստատումը ստանալուց հետո: Բաժնի կողմից պատրաստվել են անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթներ ու փաստաթղթեր և ներկայացվել են ՀՀ ԿԳՄՍՆ, ինչպես նաև ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն: 2020-2021 ուսումնական տարում կատարվել է նաև արդեն ԱԲՀ-ի ուսանող հանդիսացող ուսանողների ժամանակավոր կացության քարտերի վերձևակերպում:

2. Օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացը

2.1. Արտաքին կապերի բաժինը համագործակցում է ուսանողների ներգրավմամբ զբաղվող օտարերկրյա կազմակերպությունների հետ (Campus International, Study Medicine Europe և այլն):

2.2. Ուսանողների հավաքագրումը կատարվել է նաև անմիջապես բաժնի կողմից՝ արտերկրներից ստացվող անհատական դիմումների հիման վրա: Ուսանողների ներգրավումը համալսարանի կրթական գործընթացին իրականացվել է համաձայն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ինչպես նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարության կողմից մշակված կարգերի համաձայն:

2.3. Արտաքին կապերի բաժինը արտահամալսարանական կառույցների հետ գտնվելով մշտական կապի մեջ (էլեկտրոնային, հեռախոսային և այլն)՝ նրանց պարբերաբար տեղեկացրել է ընդունելության կարգի մեջ կատարվող փոփոխությունների մասին, ինչպես նաև նրանց ցուցաբերել է անհրաժեշտ խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն ամբողջ տարվա աշխատանքի ընթացքում:

2.4. Դիմորդների դիմումները/հայտերը ներկայացվել են համալսարանի պաշտոնական կամ Արտաքին կապերի բաժնի էլեկտրոնային հասցեներին: Բաժնի կողմից նախնական փուլում ճշտվել է դիմորդի քաղաքացիությունը/անձնագրային տվյալները և միջնակարգ/բարձրագույն կրթության վկայականի/այլ վկայականների առկայությունը, ներկայացվել են համալսարանի կողմից առաջարկվող ծառայությունները, առավելություններն ու հնարավորությունները:

2.6. Ուսանողների հավաքագրման գործընթացն իրականացվել է ողջ տարվա ընթացքում:

2.7. Արտաքին կապերի բաժինն աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ օտարերկրյա քաղաքացիներին մուտքի արտոնագիր տրամադրելու համար, կատարել է հարցումներ և ստացել պարզաբանումներ:

3. Տարվա ընթացքում Արտաքին կապերի բաժնի վարիչը, ըստ անհրաժեշտության, պատրաստել և ներկայացրել է հաշվետու տեղեկանքներ ԱԲՀ ռեկտորին, ՀՀ ԿԳՄՍՆ ստորաբաժանումներ և այլն: Ինչպես նաև 2020-2021 ուստարում Արտաքին կապերի բաժնի վարիչը պատրաստել և ներկայացրել է թվով 9 արձանագրություն, որոնք պահվում է բաժնի առօրյա գործերում:

4. Արտաքին կապերի բաժինը բոլոր ստորաբաժանումների հետ միասին մասնակցել է ուսանողների հետ տարվող աշխատանքներին՝ հանդես գալով որպես համակարգող օղակ ուսանողների և համալսարանի ստորաբաժանումների միջև: Տարվա ընթացքում

դեկանի, ուսումնական մասի վարիչի, դասախոսների հետ միասին իրականացվել են հանդիպումներ, ժողովներ ուսանողների հետ՝ կարգապահական, ակադեմիական առաջադիմության և այլ հարցերի վերաբերյալ:

Բաժինն աջակցել է օտարերկրյա ուսանողներին ինչպես կրթական, այնպես էլ իրավական, առօրեական և այլ հարցերում՝ ստեղծելով հնարավորինս բարենպաստ պայմաններ ուսանողների համար: Ամբողջ տարվա ընթացքում ակտիվ կապ է պահպանվել ուսանողների, նրանց ծնողների հետ սոցիալական ցանցերի, էլեկտրոնային հաղորդագության և հեռախոսակապի միջոցով և նրանց հարցերին տրվել է օպերատիվ լուծում: Բաժինը նաև համագործակցել է համալսարանի ստորաբաժանումների հետ՝ ուսանողների հաճախելիությանն ու առաջադիմությանն առնչվող հարցերի շրջանակում:

5. Ցավոք սրտի, 2020-2021 ուսումնական տարում նկատվեց դիմորդների թվի նվազում, որը պայմանավորված էր աշխարհում տարածված COVID-19 համավարակով: Ամփոփելով ընդունելության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ համեմատած 2019-2020 ուստարվա հետ՝ 2020-2021 ուստարում առաջին կուրս ընդունվող ուսանողների թիվը նվազել է 24%-ով: Ստորև դիագրամի տեսքով ներկայացնենք 2020-2021 ուստարվա ուսանողների ընդունելության արդյունքները համեմատած 2019-2020 ուստարվա հետ:

Գծապատկեր № 1

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ



Ներկայացնենք նաև օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողների ընդհանուր քանակը 2020-2021 ուստարվա սկզբին՝ ըստ երկրների և սեռի:

Բուժական ֆակուլտետ

Կուրս	Ընդամենը	Սեռ	Երկիր
I	67	39 իգ. 28 ար.	Հնդկաստան-52, Իրան-4, Մեծ Բրիտանիա-3, Շվեդիա-1 Հորդանան-7
II	97	51 իգ. 46 ար.	Հնդկաստան-90, Մեծ Բրիտանիա-3, Ֆիլիպիններ-2, Իրաք-1 Իրան-1
III	68	32 իգ. 36 ար.	Հնդկաստան-44, Մեծ Բրիտանիա-12, Իրաք-6, Իռլանդիա-2 Իրան-1, Շվեդիա-1, Շրի Լանկա-1, Հորդանան-1
IV	44	22 իգ. 22 ար.	Հնդկաստան-35, Իրաք-7, Մեծ Բրիտանիա-1, Հորդանան-1
V	20	6 իգ. 14 ար.	Իրաք-13, Հնդկաստան-6, Հորդանան-1

VI	7	7 ար.	Իրաք-5 , Հնդկաստան-2
Ընդ.	303	150 իգ. 153 ար.	Հնդկաստան-229, Իրաք-32, Մեծ Բրիտանիա-19, Հորդանան-10 Իրան-6, Շվեդիա-2, Իռլանդիա-2, Ֆիլիպիններ-2, Շրի Լանկա-1

Ստոմատոլոգիական ֆակուլտետ

Կուրս	Ընդամենը	Սեռ	Երկիր	
I	17	4 իգ. 13 ար.	Իրան-6, Հորդանան-5, Հնդկաստան-2	Իրաք-2, Ռուսաստան-1 Մեծ Բրիտանիա-1
II	10	3 իգ. 7 ար.	Մեծ Բրիտանիա-6, Իրաք-1	Հորդանան-2, Եգիպտոս-1
III	10	2 իգ. 8 ար.	Իրաք-6, Իրան-2	Գերմանիա-1, Մեծ Բրիտանիա-1
IV	15	4 իգ. 12 ար.	Իրաք-11, Իրան-2, Հորդանան-2	
V	11	3 իգ. 8 ար.	Իրաք-7, Իրան-2 Հորդանան-2	
Ընդ.	63	16 իգ. 47 ար.	Իրաք-27, Իրան-12, Հորդանան-11 Մեծ Բրիտանիա-8	Հնդկաստան-2, Ռուսաստան-1, Գերմանիա-1, Եգիպտոս-1

6. Համագործակցություն ուսումնական հաստատությունների և այլ կազմակերպությունների հետ

- ✓ 25.09.2020 թվականին Ավանդական բժշկության համալսարանի, «Արևելյան Լոնդոնի քոլեջ»-ի /East London College/ և “Campus International”-ի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր՝ 6 տարի ժամկետով:
- ✓ ԱԲՀ-ի և “East London College”-ի հետ կնքված պայմանագրի շրջանակում 03.02.2021 թվականին “East London College”-ի ռեկտոր Ֆինաս Կունդիլը, ուսումնական մասի վարիչ Սուբեշ Նիկաթութարա Մադհավանը և մարքեթինգի մենեջեր Արուն-Կումար Կոտտեկատտուպարամբու Գանեսանը “Campus International” կազմակերպության ղեկավար Աշոկ Կարուվարաթոդի ուղեկցությամբ այցելեցին Ավանդական բժշկության համալսարան՝ ծանոթանալու համալսարանի պայմաններին, կրթական միջավայրին և առաքելությանը: Հանդիպման ընթացքում, բնականաբար, անդրադարձ եղավ պայմանագրի կետերին և հետագա գործունեությանը: Երկու կողմերն էլ վստահեցրին, որ պատշաճ կկատարեն պայմանագրում նշված կետերը:
- ✓ 2021 թվականի մարտի 4-ին Ավանդական բժշկության համալսարանի ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը և Արտաքին կապերի բաժնի վարիչը տեսակապով հանդիպում են ունեցել Լեհաստանի Բիդգոշչ քաղաքի “WSG” համալսարանի ռեկտորի և մյուս ներկայացուցիչների հետ, քննարկել համալսարաններում գործող կրթական ծրագրերի, ուսանողների և պրոֆեսորդասախոսական կազմի ակադեմիական շարժունության վերաբերյալ մի շարք հարցեր: Ունենալով երկար տարիների փորձ

կրթական ոլորտում՝ համալսարանի երկու կողմերի ներկայացուցիչները որոշեցին համատեղ աշխատանքներ տանել նոր մասնագիտության ներդրման հետ կապված (մասնավորապես՝ «Առողջապահության կառավարում»):

- ✓ Ամփոփելով Լեհաստանի Բիդգոշչ քաղաքի "WSG" համալսարանի ռեկտորի և մյուս ներկայացուցիչների հետ քննարկումների ընթացքում առաջացած հարցերն ու պատասխանները՝ 2021 թվականի հուլիսի 16-ին կնքվեց փոխըմբռնման հուշագիր Ավանդական բժշկության և WSG համալսարանների միջև՝ հաստատելով հետազոտական, կրթական և մշակութային կապեր համալսարանների գիտական անձնակազմի և ուսանողների միջև:
- ✓ 2021 թվականի ապրիլի 13-ին Ավանդական բժշկության համալսարանի ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը և Արտաքին կապերի բաժնի վարիչը տեսակապով հանդիպում ունեցան Դելիի բժշկական գիտությունների ակադեմիայի (DAMS) ներկայացուցիչ Սուրաչնա Չանդրայի հետ: Հանդիպումը կազմակերպել էր "Campus International" կազմակերպության ղեկավար Աշոկ Կարուվարաթոդը:

  Սուրաչնա Չանդրան խոսեց FMGE նախապատրաստական դասընթացների դերի, կարևորության և առավելության մասին հնդիկ ուսանողների համար, ովքեր ուսումնասիրում են բժշկություն արտասահմանում: Նա նշեց, որ FMGE քննությունն անցկացվում է Հնդկաստանի Հանրապետության բժշկական խորհրդի կողմից, որին մասնակցում են արտասահմանյան բուհերում ուսանած բոլոր հնդիկ ուսանողները, ինչն անհրաժեշտ է Հնդկաստանում բժշկական գործունեություն ծավալելու համար, այսինքն առանց անցնելու FMGE քննությունը, որը պարտադիր պայման է, հնդիկ ուսանողները, ըստ Հնդկաստանի կառավարության կողմից հաստատված կարգի, Հնդկաստանում չեն կարող աշխատել որպես ընդհանուր բժիշկ:
- ✓ 2021 թվականի ապրիլի 21-ին Ավանդական բժշկության համալսարանի ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը և Արտաքին կապերի բաժնի վարիչը տեսակապով հանդիպում ունեցան "Study Medicine Europe" կազմակերպության (SME) ներկայացուցիչներ Թամարա Այդինյանի և Ֆիլիպ Պանտելիսի հետ: Քննարկվեցին պայմանագրի շրջանակում 3 տարիների ընթացքում SME կողմից տարված աշխատանքները:
- ✓ 2021 թվականի հունիսի 16-ին կնքվեց եռակողմ պայմանագիր՝ «Ավանդական բժշկության համալսարան»-ի, ի դեմս ռեկտոր՝ կ.գ.թ., պրոֆեսոր Նորիկ Սարիբեկյանի, «Սըքսես Փոինթ» քոլեջի, ի դեմս գործադիր տնօրեն՝ Ֆինաս Կունդիլի և երրորդ կողմ՝ «Կամպուս Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի, ի դեմս Աշոկ Կարուվարաթոդիի միջև: Պայմանագրի նպատակն է խթանել ուսանողների ակադեմիական շարժունությունը և հնարավորություն ընձեռել "Success Point" քոլեջի ուսանողներին շարունակել ուսումն ԱԲՀ-ում:

Մասնակցություն վերապատրաստմանը

- ✓ Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ENIC Armenia), շարունակելով ավանդույթը, դեկտեմբերի 23-ին Էլիտ Պլազա բիզնես կենտրոնում կազմակերպել էր օտարերկրյա որակավորումների

ճանաչման վերաբերյալ հերթական դասընթացը, որին մասնակցեցին Ավանդական բժշկության համալսարանի պրոռեկտորը և Արտաքին կապերի բաժնի վարիչը:
Դասընթացը նախատեսված էր ՀՀ բուհերի ղեկավար կազմի, միջազգային բաժինների և ընդունելության հարցերով զբաղվող (admission officers) անձնակազմի համար: Դասընթացն անցկացվեց ինտերակտիվ եղանակով՝ տեսական և իրական օրինակների համակցությամբ: Մասնակիցները դասընթացի ավարտին ստացան վկայական

12. ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԲՈՒԿ-ի բժշկական օգնության և սպասարկման տեսակներն են՝

1. բժշկական ընդհանուր պրակտիկա,
2. ստոմատոլոգիական,
3. ատամնատեխնիկական,
4. ռեֆլեքսոթերապևտիկ:

Աշխատողների ընդհանուր քանակը՝ 15 մասնագետ:
Բժիշկներ՝ 11, որից

- ✓ Հոմեոպաթ՝ 1,
- ✓ Ներզատաբան՝ 1,
- ✓ Ռեֆլեքսոթերապևտներ՝ 5,
- ✓ Գաստրոէնտերոլոգ՝ 1
- ✓ Ստոմատոլոգ՝ 3:

Միջին բուժանձնակազմ՝ 4, որից՝
Բուժքույր՝ 2,
Սանիտարուհի՝ 1,
Ատամնատեխնիկ՝ 1:

Կենտրոնում իրականացվում է ըստ մասնագիտությունների պրակտիկ ուսումնական գործընթաց և բուժսպասարկում, բացի դրանից նաև գիտական աշխատանքներ՝ ավանդական բժշկության բնագավառում:

- Բարձրացվում է ամբիոնի աշխատակիցների գիտական մակարդակը սեմինար պարապմունքների միջոցով: Զեկուցումներով հանդես են գալիս ամբիոնի աշխատակիցները: Կատարվում է թեմայի քննարկում: Սեմինարն ամփոփվում է ավանդական բժշկության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի միջոցով:
- Կատարվում է հիվանդների վերլուծություն ուսանողների մասնակցությամբ, մշակվում է բուժման պլան և ինտեգրատիվ բուժում:
- Անցկացվում են բուժական պրոցեդուրաներ, ծանոթացվում է կատարման տեխնիկային և անվտանգության կանոններին:
- «Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնում կատարվում է՝
  1. ասեղ-այրում թերապիա
  2. բազմասեղային ներգործություն
  3. բուժական մերսում

4. ասեղ-այրում թերապիան զուգորդվում է ֆիտոթերապիայի և ֆարմակոթերապիայի հետ:

2020թ. «Է. Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնում բուժման կուրս են անցել թվով 198 հիվանդ, իսկ ստոմատոլոգիական կաբինետում՝ 117:

Ստոմատոլոգիական բաժանմունքում բացի հիվանդների սպասարկումից, անցկացվում են ուսումնական գործնական պարապմունքներ և ուսումնաարտադրական պրակտիկաներ, որոնց ընթացքում ուսանողները ձեռք են բերում համապատասխան հմտություններ ու կարողություններ:

Ելնելով երկրի արտակարգ դրությունից, համավարակի պայմաններում անհնար էր անցկացնել գարնանային կիսամյակի ուսումնաարտադրական պրակտիկաները, ուստի, համաձայն ԱԲՀ ռեկտորի հրամանի, ստոմատոլոգիական ֆակուլտետի 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկաները տեղափոխվել են 2020-2021 ուսումնական տարի:

13. ԳՐԱԴԱՐԱՆ

Վերջին շրջանում COVID-19-ի պատճառով համալսարանում կատարված կրթության մատուցման ձևի փոփոխությունը՝ դասընթացների վարումը հեռավար ուսուցման ձևաչափով, անմիջականորեն ազդեց գրադարանային ծառայությունների մատուցման վրա. գրադարանը ևս սկսեց գործել հեռավար: Ամբողջ ընթացքում գրադարանն աշխատել է անխափան, մշտապես կապի մեջ է եղել ուսանողների հետ: Ուսանողներին անհրաժեշտ էլեկտրոնային գրքերն ու էլեկտրոնային դասախոսությունները ուղարկվել է FB սոցիալական հարթակի միջոցով կամ էլեկտրոնային նամակներով:

Աշխատանքն ակտիվ ու օպերատիվ է եղել հատկապես քննական շրջանում. հեռավար ապահովվել է ուսանողների գրադարանից օգտվելու իրավունքը:

Թեև նախկինում էլ գրադարանը ուսանողներին տրամադրել է էլեկտրոնային գրականություն, սակայն տվյալ իրավիճակում նկատելի էր էլեկտրոնային գրքերի պահանջարկ:

Կարևորելով ուսանողների շրջանում էլեկտրոնային գրքերի նկատելի պահանջարկը և, հաշվի առնելով համացանցում մուտքավճարների պատճառով դրանց անհասանելիությունը, համալսարանը անդամակցեց «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը, որի շնորհիվ հնարավորություն ստացանք օգտվել էլեկտրոնային ռեսուրսների լայն տեսականուց:

Այս ուսումնական տարում Ավանդական բժշկության համալսարանը, հանդիսանալով «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի» անդամ-կազմակերպություն, ձեռք է բերել Polpred.com Media Review լրատվական էլեկտրոնային շտեմարանի անվճար մուտք մինչև 15.10.2021 թվականը:

Տեղեկացնեմ, որ ռուսալեզու այս շտեմարանը ներառում է վերջին 25 տարիների ընթացքում տարբեր ՁԼՄ-ների կողմից հրապարակված միլիոնավոր հոդվածներ, կարևոր նյութեր և հարցազրույցներ ավելի քան 25000 առաջին դեմքերից, որոնք խմբավորված են ըստ 110 ոլորտների՝ ներառյալ բժշկականը:

Ավանդական բժշկության համալսարանի գրադարանը ձեռք է բերել նաև «Taylor & Francis»-ի էլեկտրոնային գրքերի մեկամսյա անվճար փորձնական մուտքի հնարավորություն: Taylor & Francis-ից ընդհանուր ցանկից առանձնացվել է բժշկական մասնագիտական գրականությունը, որպեսզի հարկ եղած դեպքում համալսարանի ուսանողներն ու դասախոսներն առանց ավելորդ որոնումների տիրապետեն տվյալ կայքում առկա և մեզ հասանելի անհրաժեշտ բժշկական և այլ առարկաների գրքերի տվյալներին:

2021 թվականի հունիսին լրացվել, սքանավորվել և ուղարկվել են 7 էլեկտրոնային շտեմարանների բաժանորդագրության արտոնագրեր:

Էլեկտրոնային գրացանկերն ու դրանց հղումները ուսանողներին ավելի դյուրին ու հասանելի դարձնելու և մշտապես ուսանողի հետ կապ պահպանելու նպատակով՝ 2021 թվականին սկսել է գործել utmlibrary30@gmail.com էլեկտրոնային հասցեն:

Վերոհիշյալ բոլոր ձեռքբերումների ու գրադարանային նորությունների մասին տեղեկատվությունը տեղադրվել է կայքէջի «Հայտարարություն» և «Հանրությանը» բաժիններում, ֆեյսբուքյան հարթակում՝ ուսանողներին իրազեկելու նպատակով:

ԱԲՀ գրադարանի գրքային ֆոնդերի, ինչպես նաև էլեկտրոնային գրքերի շտեմարանների և էլեկտրոնային գրքամատյանների մասին տեղեկատվությունը հավաքագրել է Google drive-ում:

2021 թվականին գրադարանավարուհին մասնակցել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Համալսարանական շարունակական կրթության բաժնի և ԲՊՀ գիտական գրադարանի կազմակերպած գրադարանավարների մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, ձեռք բերել գրադարանային գործի վերաբերյալ համապարփակ գիտելիքներ: Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի վերոհիշյալ բաժինը համալսարանի գրադարանին է տրամադրվել գրադարանի գործի վարման պատրաստի փաստաթուղթ՝ բազա, որի հիման վրա մուտքագրվել են համալսարանի գրադարանում առկա գրականության տվյալները: Պատրաստ լինելուն պես՝ այն ավելի կհեշտացնի գրադրանային գործի վարումը:

ԱԲՀ գրադարանը 2020-2021 ուստարում շարունակել է համագործակցել «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ի հետ: Առողջապահության Ազգային ինստիտուտի «Հանրապետական գիտաբժշկական գրադարան-կենտրոնի» արդիականացման ծրագրի շրջանակներում գրադարանավարուհին մասնակցել է քննարկման՝ ուսանողների տեղեկատվական գրագիտության, հետազոտական հմտությունների բարելավում թեմայի շուրջ: Մասնակիցները տեղեկացվել են ԱԲՀ-ի անցած ուղու ու պատմության, առկա հնարավորությունների ու ռեսուրսների, ինչպես նաև արդի ժամանակաշրջանում գրադարանի հաջող գոյության մեր տեսլականի ու առաջարկությունների մասին:

Տարեվերջում ամփոփվել և կազմվել է նաև ուսանողների կողմից գրադարանին չվերադարձրած և այլ գրքերով փոխարինված գրքերի ցուցակը:

✓ **էլեկտրոնային շտեմարանների բաժանորդագրության արտոնագրերի մասին**

1. SAGE Premier ամսագրերի ժողովածուն պարունակում է միջազգային առաջատար հեղինակավոր ամսագրեր՝ բիզնեսի, հումանիտար, սոցիալական գիտությունների, տեխնոլոգիաների և բժշկության ոլորտներում:

2. Royal Society Journals հավաքածուն իր մեջ ներառում է 9 անուն բարձր հեղինակություն ունեցող ամսագրեր ֆիզիկական և կենսաբանական գիտություններում:
3. IMechE Journals SAGE Publishing-ի կողմից հրատարակված ImechE Journals-ն առաջարկում է 18 անուն գիտական ամսագիր մեխանիկական ինժեներական թեմաներով:
4. Edward Elgar Publishing-ի էլեկտրոնային գրքերի հավաքածուները ներառում են գիտական մենագրություններ, ձեռնարկներ, հանրագիտարաններ և տեղեկատու գրքեր. ավելի քան 750 անուն գիրք բազմաթիվ ոլորտների ուսումնասիրությունների վերաբերյալ:
5. «E-Duke Journals Scholarly Scholarly» հավաքածուն առցանց մուտք է ապահովում Duke University Press-ի ամսագրերին հումանիտար և սոցիալական գիտություններում:
6. ASTM Compass-ը արդյունաբերության առաջատար ստանդարտների և տեխնիկական տեղեկատվության հսկայական հավաքածու է:
7. OpenEdition Freemium Journals- Հումանիտար և սոցիալական գիտությունների 175 միջազային ամսագրեր բաց են տարբեր ֆորմատներով տարբեր էլեկտրոնային կրիչների համար: Հրատարակությունների 80%-ը ֆրանսերեն են, կան նաև անգլերեն, իսպաներեն, իտալերեն, գերմաներեն, պորտուգալերեն:

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի բացակայությամբ պայմանավորված՝ բաժնի գործառույթների իրականացումը կատարում է Կայքէջի պատասխանատուն:

Հաշվետու ժամանակաշրջանում կրթական հաստատության գործունեության վերաբերյալ հասարակության ամենատարբեր շերտերին տեղեկատվություն է ներկայացվել համալսարանի պաշտոնական կայքի՝ www.utm.am կայքով, ինչպես նաև facebook սոցիալական ցանցի միջոցով՝ https: //www.facebook.com/ UniversityofTraditonalMedicine:

Լայնածավալ աշխատանքներ են տարվել էլեկտրոնային լրահոսի ստեղծման ու հրապարակման, ինչպես նաև հոբելյանական միջոցառումների ու ծննդյան տարեդարձերի, կարևոր այցերի, համալսարանի կրթական ծրագրերի, գիտական կենտրոնների գործունեության արդյունքների վերաբերյալ քարոզչական, ինֆորմացիոն բնույթի նյութեր պատրաստելու և շրջանառելու համար:

Վերոնշյալ աշխատանքների համատեքստում, արդիական, արդյունավետ տեքստային և վիզուալ բովանդակությամբ (կոնտենտ) հարթակներ ունենալու նպատակով, առաջնային կարևորվել ու օրակարգ է բերվել համապատասխան դաշտի ուսումնասիրությունը գործընկեր կազմակերպությունների շրջանում:

Մշտադիտարկվել և մանրակրկիտ վերլուծության է ենթարկվել մեկ տասնյակից ավելի ուսումնական հաստատությունների համացանցային ներգրավվածությունը:

Հիմնվելով հիշյալ աշխատանքի վրա՝ մշակվել և կազմվել է նախկինում գործող կրթական պաշտոնական կայքի ընդհանուր բովանդակության և կառուցվածքային փոփոխությունների ուղեցույց, որի իրագործումը տեսանելի է փուլային աշխատանքների ավարտից հետո:

Ըստ այս ուղեցույցի վերաձևափոխվել է «Փաստաթղթեր» բաժինը:

- Բաժնի տեսողական բովանդակությունը ամբողջացնելու նպատակով՝ մշակվել ու պատկերի համապատասխան ֆոտոծրագրային խմբագրման են ենթարկվել բաժնի հետ համահունչ նկարներ,
- Փաստաթղթերը տարանջատվել են մի քանի ենթախմբերի, որոնք անվանվել են «Կանոնակարգեր», «Կանոնադրություններ», «Ուղեցույցներ», «Զարգացման ռազմավարական ծրագիր», «Հաշվետվություններ», «Այլ փաստաթղթեր»:
- Ընդհանուր առմամբ PDF տարբերակով ենթաբաժիններ են մուտքագրվել հայերեն և անգլերեն 96 փաստաթուղթ:

«Գիտություն» բաժնի հիման վրա կազմավորվել են 2 կատեգորիաներ՝ «Գիտական գործունեություն» և «Գիտաժողովներ»: Եթե առաջինում ներկայացված է համալսարանի ընդհանուր գիտական քաղաքականության գիծը, ապա երկրորդում, ըստ ստեղծված առանձին ենթաբաժինների, անդրադարձ է կատարվում յուրաքանչյուր գիտական միջոցառման՝ դարձյալ տեսողական և տեքստային բովանդակությամբ: Այս բաժինը դեռ վերամշակման փուլում է:

Հիմնովին փոփոխության է ենթարկվել նաև «Գրադարան» բաժինը: Ձևավորվել է 5 կատեգորիա, որոնցից յուրաքանչյուրն ունի իր բովանդակային առանձնահատկությունը: Այս բաժնի որոշ ենթաբաժինների բովանդակային համալրման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

Արդիականացվել է նաև «Ֆակուլտետներ» բաժինն իր ենթաբաժիններով:

Աշխատանքներ են տարվում կայքի «Ամբիոններ» ենթաբաժնի համար: Ուսումնասիրվում են ամբիոնների արխիվային տվյալները՝ «Ամբիոնների պատմություն» ենթաբաժնի համար, աշխատանքներ են կատարվել նաև ամբիոնների աշխատակազմի կենսագարական տվյալների հավաքագրման համար:

Նախորդ տարիներին չգործող «Հայտարարություններ» բաժինը սկսել է ծառայել իր բուն նպատակին՝ համալրվելով համապատասխան բովանդակությամբ:

Բացի բուն կառուցվածքային փոփոխություններից կատարվել են ինֆորմացիոն թարմացումներ: Թարմացվել են են ԱԲՀ ռեկտորատի, Գիտական խորհրդի, ԱԲՀ կառավարման խորհրդի, ԱԲՀ ուսումնական և Գիտական խորհուրդների կազմերի տվյալները, տարեկան աշխատանքային պլանները և այլն:

Կազմվել և տեղադրվել են 50-ից ավել ինֆորմացիոն-տեղեկատվական բնույթի նյութեր կայքէջի «Նորություններ և իրադարձություններ» բաժնում: 300-ից ավելի գրառումներ են արվել Ավանդական բժշկության համալսարանի պաշտոնական ֆեյսբուքյան էջում:

Պատրաստվել և հրապարակվել է հոդված՝ Ավանդական Բժշկության համալսարանի «Գիտական մասի» վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու Ռոման Հովսեփյան մասին:

Վերոնշյալ աշխատանքների բոլոր փուլերը սկսած նկարահանումից, մոնտաժային և տեքստային աշխատանքներից մինչև վերջնական արդյունք, կատարվել են կայքի պատասխանատուի անմիջական մասնակցությամբ:

Ավանդական բժշկության համալսարանի պաշտոնական ֆեյսբուքյան էջի ակտիվության արդյունքում մոտ 4 անգամ ավելացել են հետևորդների և էջի հավանումների թվաքանակը:

Ամփոփելով կատարված աշխատանքները՝ պետք է արձանագրենք, որ աշխատանքներն ընթանում են ոչ ցանկալի արագությամբ: Ցավոք, ըստ նախնական մակետի, որոշ ցանկալի կառուվածքային փոփոխություններ այդպես էլ հնարավոր չեղավ իրագործել: Որակյալ գործիքակազմը կիրառելու և նպատակային արդյունք ունենալու համար ցանկալի է լրացուցիչ մասնագետների ներգրավում:

14. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Տնտեսական մասը, համաձայն իր 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանի, աշխատակիցների հետ քննարկել է աշխատանքային գործունեության հիմնական խնդիրները և դրանց լուծման եղանակները:

Ներհամալսարանական տնտեսությունը կազմակերպելիս օգտագործվել է տնտեսական մասի աշխատակիցների ներուժը: Հստակեցվել են տնտեսական աշխատակազմի գործառույթները, կարևորվել է տնտեսական մասի աշխատողների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը, դրանց նկատմամբ իրականացվել են պարբերական ստուգումներ, գնահատումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

- 2020-21 ուստարվա ուսումնական գործընթացի կազմակերպման համար հատկացված ֆինանսական ռեսուրսներով ձեռք են բերվել՝
  - գրենական պիտույքներ՝ 338 260 000 դրամ
  - մատյաններ, ուսանողական տոմսեր և գրքույկներ՝ 281500 դրամ
  - ստոմատոլոգիական նյութեր՝ 509 600 դրամ
- Լսարանները և աշխատասենյակները տեխնիկապես հագեցնելու և կահավորելու համար ձեռք է բերվել ՝
  - Համակարգիչ՝ 377 000 դրամ
  - Տպիչ սարք՝ 394 000 դրամ
- Համալսարանի համակարգչային ցանցի սպասարկման համար ծախսվել է՝ 1177500 դրամ:
- Թվային գրադարանի ասոցիացիային անդամագրվելու համար հատկացվել է 100 000 դրամ:
- Բուհերի տեղեկատույում տպագրվելու համար ծախսվել է 56 000 դրամ:
- Թափուր աշխատատեղերի հայտարարությունների ինտերնետային կայք-էջի համար հատկացվել է 10 000 դրամ:

15. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱԲՀ-ի ուսանողական խորհուրդը, որի կազմում ընդգրկված է 9 ուսանող, հաշվետու ժամանակաշրջանում անցկացրել է 3 նիստ: ՈՒԽ-ն իր աշխատանքային պլանի համաձայն

հնարավորություն չի ունեցել ծավալել համապատասխան միջոցառումներ՝ կովիդի համավարակով պայմանավորված: Ճիշտ է, դասերը կազմակերպվել են առցանց, հիբրիդային տարբերակներով, չի խաթարվել ուսուցման անընդհատությունը, սակայն Ուսանողական խորհրդի կողմից միջոցառումների կազմակերպումն ու իրականացումն էապես տուժվել է: Այնուամենայնիվ, ՈՒԽ-ն 2020-2021 ուստարվա ընթացքում ապահովվել է ուսանողությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ: Տեղեկատվական-խորհրդատվական աշխատանքներ հաճախ են տարվել: Ուսանողներն իրազեկվել են իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, ինչպես նաև ծանոթացել ԱԲՀ-ում գործող, նոր մշակված կամ վերանայված այն փաստաթղթերին, որոնք հատկապես վերաբերել են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ուսումնառության արդյունքների գնահատմանը և այլն:
ՈՒԽ նախագահը մասնակցել է Գիտխորհրդի բոլոր նիստերին:

ՈՒԽ-ի նիստերին մասնակցել են ոչ միայն խորհրդի անդամները, այլև Ստոմատոլոգիական և Բուժական ֆակուլտետների դեկանը, Ուսումնական մասի վարիչը, Արտաքին կապերի բաժնի մասնագետը, գրադարանավարուհին:

ՈՒԽ-ի նիստերի ժամանակ ուսանողներն իրազեկվել են «Պրակտիկայի վերանայված կանոնակարգ»-ի, «Պրակտիկայի թղթապանակ»-ի, «ԱԲՀ-ի վերանայված ներքին կարգապահական կանոններ»-ի, «ԱԲՀ սովորողների ակադեմիական շարժունության», «ԱԲՀ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով սովորողների «Ուսանողի ուղեցույցի», Գրադարանի վերանայված կանոնակարգի մասին:

Հաշվետու ժամանակաշրջանում շատ աշխատանքներ մնացել են անկատար, ինչպես օրինակ՝ ուսանողների մասնակցությունը ներբուհական, միջբուհական սպորտային միջոցառումներին, էքսկուրսիաների կազմակերպումը, այցերը Հայաստանի պատմամշակութային վայրեր ոչ միայն հետաձգվել են, այլև չեղարկվել:

ԱԲՀ-ում սովորող ցանկացած ուսանող գիտի, որ Ուսանողական խորհուրդն այն հարթակն է, որտեղ ինքը կարող է բարձրացնել իրեն հուզող հարցերը և ստանալ սպառիչ պատասխաններ, արտահայտել իր սեփական կարծիքն ու դիրքորոշումները: Այս առումով ուսանողության հիմնախնդիրներին առավել մեծ ուշադրություն դարձնելը և այդ խնդիրների լիարժեք լուծում տալը մշտապես եղել է համալսարանի ղեկավարության և ուսանողական խորհրդի անմիջական ուշադրության կենտրոնում է:

16. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Հաշվի առնելով Համալսարանում կառուցվածքային փոփոխությունները՝ հաշվետու տարում զգալի աշխատանքներ են տարվել որակի ապահովման և կրթության բարեփոխումներին միտված, որոնք համակարգել են ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը, ԳԽ-ին կից ՈԱ հանձնաժողովը:

✓ **Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց:**

Համաձայն թերությունների վերացման գործող պլան-ժամանակացույցի՝ ամբողջովին իրականացվել են համալսարանում գործող ներքին նորմատիվ իրավական փաստաթղթերի վերանայման աշխատանքները: Մշակվել են անհրաժեշտ նոր ներքին նորմատիվ իրավական փաստաթղթեր:

ՈԱ և ԿԲ գծով պրոոեկտորի նախաձեռնությամբ կազմակերպվել են քննարկումներ ամբիոնների վարիչների, ստորաբաժանումների ղեկավարների և ուսանողների հետ, իրականացվել են առաջնահերթ ուսումնասիրություններ ըստ Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության փաթեթի 10 չափանիշների, համալսարանի 9-ը ուժեղ և 16 թույլ կողմերի շուրջ:

- ✓ **ՈԱԱԿ-ի հետ համատեղ որակի ներբուհական ապահովման աշխատանքների կազմակերպում:**

Ընթացիկ ուստարում ԱԲՀ-ն ակտիվացրել է իր համագործակցությունը ՈԱԱԿ հիմնադրամի հետ, պարբերաբար մասնակցել է կենտրոնի կողմից կազմակերպված առցանց հանդիպում-քննարկումներին, որոնք հիմնականում վերաբերում էին ուսումնառության վերջնարդյունքների հավաստիությանը, ՄԿԾ-ի լավագույն փորձի ուսումնասիրությանը և արտակարգ դրության պայմաններում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Ակտիվացել են նաև ներքին շահակիցների շրջանում կազմակերպվող որակի ապահովմանն առնչվող խորհրդատվական հանդիպումները:

- ✓ **ԱԲՀ-ի 2020-2025թթ. ՌԶԾ-ի ընթացքը:**

Իրականացվում է 2020-2021 ուստարվա ՌԶԾ-ի գործողությունների գնահատում՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման հանձնաժողովի դիտարկումների հիման վրա վերանայված և Համալսարանի Կառավարման խորհրդի կողմից հաստատված 2020-2025թթ. ՌԶԾ-ի գնահատման առանցքային ցուցիչներին համապատասխան:

SWOT (ՈւԹՀՎ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. ԱԲՀ ռազմավարական զարգացման ծրագրի գնահատման ներդրում՝ ըստ ԳԱՑ-երի: 2. Կրթական ծրագրերի իրականացման բարենպաստ կրթական միջավայրի շարունակական բարելավում: 3. Ֆինանսական պլանավորման և ֆինանսական մուտքերի բաշխման քաղաքականության հստակեցում: 4. Շրջանավարտների զբաղվածության տվյալների բազայի առկայություն: 5. Կոռուպցիայի բացակայություն: 6. Աշխատանքային բարձր կարգապահություն: 7. Դիմորդների հավաքագրման տարբեր մեխանիզմների առկայություն: 8. Ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ:	1. Ստորաբաժանումների հաշվետվությունների ոչ վերլուծական մոտեցումը: 2. ԱԲՀ-ի ռազմավարական նպատակների և որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցության ցածր մոտիվացիա: 3. Ֆինանսական մուտքերի կենտրոնացվածություն՝ հիմնականում մեկ աղբյուրից՝ վարձավճարներից: 4. Վերապատրաստման և որակաորման բարձրացման քաղաքականության ոչ լիարժեք իրականացում: 5. ՊԴ կազմի կատարելագործմանն ուղղված ոչ բավարար ֆինանսական միջոցներ: 6. Գիտահետազոտական աշխատանքներում դասախոսների և ոչ բավարար մասնակցություն:

	7. Պաշտոնական կայքի ոչ լիարժեք գործարկում. տեղեկույթի հատվածաբար ներկայացում, տեղեկատվության ոչ համապարփակվածություն: 8. Սեփական ստացիոնար կլինիկայի բացակայություն:
Հնարավորություններ	**Վտանգներ**
1. ԱԲՀ վերանայված կազմակերպական կառուցվածքով պայմանավորված զարգացման հնարավորություններ: 2. Հասարակության հետ կապերի ընդլայնում, բուհի կրթական ծառայությունների մասին մշտապես տեղեկատվության տրամադրում: 3. Ուսանողական պրակտիկայի հնարավորությունների ընդլայնման նպատակով նոր գործընկերների ձեռքբերում, համագործակցության նոր պայմանագրերի և հուշագրերի կնքում: 4. Զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության ակտիվացում՝ բուհի ղեկավարության կողմից տրվող հարցազրույցների, մամուլի ասուլիսների միջոցով: 5. Համալսարանական փոքրիկ ավանի հիմնում՝ իր բոլոր հնարավորություններով: 6. Արտաքին և ներքին միջավայրերից ստացվող տեղեկատվության պարբերաբար վերլուծություն, կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատում: 7. Համագործակցության ընդլայնում և փորձի փոխանակում համապատասխան կառույցների հետ: 8. ԱԲՀ աշխատակիցների վերապատրաստման փաթեթի մշակում և իրականացում: 9. ԱԲՀ աշխատակիցների վերապատրաստում՝ ՈԱ մշակույթի զարգացման նպատակով: 10. Աշխատողների խրախուսման մեխանիզմների բարելավում: 11. Հետդիպլոմային ուսուցման կամակերպում:	1. Բժշկական պետական կրթական չափորոշիչների բացակայություն: 2. ՀՀ որակավորումների սեկտորալ շրջանակների բացակայություն: 3. Ռիսկերի կառավարման համակարգի ոչ լիարժեք գործադրում: 4. ԱԲՀ ֆինանսական մուտքերի զգալի կախվածություն ուսանողների ընդունելության ցուցանիշներից: 5. Հանրապետությունից կադրերի արտահոսքը: 6. Համավարակի բռնկումը և տարածումը: 7. Միջազգային քաղաքական ճգնաժամի հնարավոր նոր դրսևորումներ:

12. Ֆինանսական եկամուտների ավելացման հնարավորություն /ծառայությունների մատուցում, դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն և այլն/:	

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով ԱԲՀ-ի 2020-2021 ուստարվա գործունեությունը՝ կարող ենք եզրակացնել, որ համալսարանը զգալի աշխատանքներ է իրականացրել կրթության որակի ապահովման, միջազգայնացման ուղղությամբ, սակայն առկա են որոշ խնդիրներ, որոնք անհապաղ լուծում են պահանջում:

Մասնավորապես՝

- Համալսարանի գիտահետազոտական աշխատանքներում դասախոսների և ուսանողների թույլ ներգրավվածության հիմնախնդրի լուծման նպատակով հարկավոր է իրականացնել համալիր միջոցառումներ՝ բարձր վարկանիշ ունեցող միջազգային ամսագրերում տպագրությունների խրախուսում, ուսումնական, մեթոդական ձեռնարկների տպագության խրախուսում, պարբերականի հիմնադրում և այլն:
- ԱԲՀ-ի ռազմավարական նպատակների և որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների իրազեկվածության բարձրացման, նրանց մասնակցության ցածր մոտիվացիայի խնդրի լուծման նպատակով պարբերաբար կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, սեմինարներ, գիտաժողովներ:
- Ապահովել որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական կիրառումը ՈՆԱ գործընթացներում:
- ԱԲՀ-ի ներկայացվածությունը համացանցային տիրույթում դարձնել առաջնային, ապահովել կայքի առաջխաղացումը՝ բարձրացնելով կայքի տեսանելիությունը համացանցում: Կատարել նաև կայքի ներքին բարելավման աշխատանքներ, հնարավորինս կայքն օգտագործողի համար ավելի դյուրին դարձնել՝ ապահովելով օպերատիվ ու բազմաբովանդակ տեղեկատվություն: